ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » նոյեմբեր 2024թ. No 6085 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/2813-24 առ 01.11.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 5 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի նոյեմբերի « 06 » - ի N6085 - Ա հրամանի

ԳՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՂԵՐ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Պերինամ Դենկ 4/5	պերինդոպրիլ (պերինդոպրիլի տերտ-բուտիլամին), ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	դեղահատեր	4մգ+5մգ; (30/2x15/) բլիստերում	Ակտավիս ՍՊՐ, ԲԼԲ015, ԲԼԲ 016,Բուլեբել Ինդաստրիալ Իստեյտ, Զեջտուն, ՋՏՆ 3000	Մալթա	Դենկ Ֆարմա Գմբհ և Քո. ԿԳ, Պրինցրեգենտեն փ. 79, 81675 Մյունխեն	Գերմանիա	Դ	22409 31.10.2024
2	Պերինամ Դենկ 4/10	պերինդոպրիլ (պերինդոպրիլի տերտ-բուտիլամին), ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	դեղահատեր	4մգ+10մգ; (30/2x15/) բլիստերում	Ակտավիս ՍՊՐ, ԲԼԲ015, ԲԼԲ 016,Բուլեբել Ինդաստրիալ Իստեյտ, Զեջտուն, ՋՏՆ 3000	Մալթա	Դենկ Ֆարմա Գմբհ և Քո. ԿԳ, Պրինցրեգենտեն փ. 79, 81675 Մյունխեն	Գերմանիա	Դ	22410 31.10.2024
3	Պերինամ Դենկ 8/10	պերինդոպրիլ (պերինդոպրիլի տերտ-բուտիլամին), ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)	դեղահատեր	8մգ+10մգ; (30/2x15/) բլիստերում	Ակտավիս ՍՊՐ, ԲԼԲ015, ԲԼԲ 016,Բուլեբել Ինդաստրիալ Իստեյտ, Զեջտուն, ՋՏՆ 3000	Մալթա	Դենկ Ֆարմա Գմբհ և Քո. ԿԳ, Պրինցրեգենտեն փ. 79, 81675 Մյունխեն	Գերմանիա	Դ	2211 31.10.2024
4	ԿԻՍՔԱԼԻ	ռիբոցիկլիբ (ռիբոցիկլիբի սուկցինատ)	դեղահատեր թաղանթապատ	200մգ; (21/1x21) PA/AL/PVC բլիստերում, (21/1x21) PVC/PCTFE բլիստերում, (63/3x21/) PA/AL/PVC բլիստերում, (63/3x21/) PVC/PCTFE բլիստերում	Նովարտիս Ֆարմասյուտիկալ Մանուֆակչըրինգ ՍՊՐ, Վերովսկովա փ. 57, Լյուբլյանա 1000	Սլովենիա	Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիիստշտրասե 35, 4056 Բազել	Շվեյցարիա	Դ	22412 31.10.2024

5	Տրանեքսամաթթու	տրանեքսամաթթու	լուծույթ ն/ե ներարկման	50մգ/մլ; (5/1x5/) ամպուլներ 5մլ բլիստերում, (10/2x5/) ամպուլներ 5մլ բլիստերում	Բ-ՖԱՐՄ ՍՊԸ, Կալուգայի մարզ, Բորովսկիյ գյուղական ավան, Վորսինո գյուղավան, գ. Դոբրինո, 1-ին Վոստոչնիյ անցում, շ. 4, կառույց 1- բալք արտադրող, փաթեթավորող, որակի (ֆիզիկոքիմիական) և բաց թողնման հսկող, ՎԻՖԻՐՏԵԽ ՓԲԸ, Մոսկվայի մարզ, Սերպուխով շրջան, Օբոլենսկ գ., Օբոլենսկի պողոտա, շ. 16/1, Ռուսաստան- որակի հսկող (մանրէաբանական)	Ռուսաստան	Բ-ՖԱՐՄ ՍՊԸ, 143026, Մոսկվայի շրջան, Օդինցովսկիյ քաղաքային շրջան, գ. Նովոիվանովսկոե, փ. Ազրոքիմիկով, շ. 2Ա, ս. 2	Ռուսաստան	Դ	22413 31.10.2024